

# «ԱՊՐԻԼ»Ի «ԵՐԵՅ»ԻՆ «ԱՆԿԵՐԵԼԻ» ՄԵԿՆՈՒՄԸ

Posted on October 23, 2010 by Keghart

**keghart.com**

Category: [Opinions](#)



**✘ Պարոյր Աղպաշեան, Պեյրուբ, 21 Հոկտեմբեր 2010  
(Յարուբ Երեցեանի Յիշատակին)**

✘ Յարուբ Երեցեանին այսքան արագօրէն եւ անշշուկօրէն մեկնումը, անկասկած, շանթահարած է, ինչպէս իր ընտանիքն ու հարազատները, նոյնպէս իր անկեղծ ընկերներուն ու բարեկամներուն լայնածիր շրջանակները, սկսած Լիբանանէն, Ամերիկայէն մինչեւ Հայաստան:

**✘ Պարոյր Աղպաշեան, Պեյրուբ, 21 Հոկտեմբեր 2010  
(Յարուբ Երեցեանի Յիշատակին)**

✘ Յարուբ Երեցեանին այսքան արագօրէն եւ անշշուկօրէն մեկնումը, անկասկած, շանթահարած է, ինչպէս իր ընտանիքն ու հարազատները, նոյնպէս իր անկեղծ ընկերներուն ու բարեկամներուն լայնածիր շրջանակները, սկսած Լիբանանէն, Ամերիկայէն մինչեւ Հայաստան:

Պեյրուբի ՀԲԸ Միութեան Յովակիմեան-Մանուկեան Վարժարան, Երեւանի գեղարուեստաթատերական ինստիտուտ, Լոս Անճելըսի «Ապրիլ» գրատուն, եղան Յարուբին կեանքին երեք հիմնական առանցքները, ուր դրսեւորուեցան իր ուսումնական, ընկերային, ասպարեզային ու մարդկային յառաջադէմ, ազնիւ, խորագիտակ եւ ազնուական գիծերը, զինք դարձնելով համակրելի, օրինակելի ու սիրելի անձ մը:

Գիտական սուր միտքով, գեղարուեստական ճոխ գիտելիքներով եւ ընդհանրական հարուստ պաշարներով առլցուն Յարուբը, միշտ մնաց կեդրոնական դէմք իր միջավայրերէն ներս, «տերվիշ» ըլլալու համեստութեամբ:

«Ապրիլ» գրատունը եղաւ իր մտաւորական աշխարհի կեդրոնը, ատկէ «բաժին» հանելով նաեւ ուրիշներու, մինչեւ հեռաւոր ասիեր:

Գիտցաւ «Ապրիլ»ը ապրեցնել «երեց»ներու վայել լրջութեամբ ու խոհեմութեամբ, անոր ընդմէջէն միտքի, խօսքի ու գրիչի լոյս սփռելով ամենուրեք:

Ապրիլ սիրող, կենսուրախ ու լաւատես սիրելի Յարուբին այս «բացակայութիւն»ը (եղբօր՝ Նուպարէն, քրոջ՝ Անահիտէն ետք, դարձեա՛լ կանխահասօրէն), որոշապէ՛ս, ցնցած է բոլորը, որովհետեւ տակաւին ընելիք ունէր, իր աշխոյժ ներկայութեամբ, արդիւնաւետ գործունեութեամբ ու տիպար ծառայասիրութեամբ:

Այս արագ մտորումը, իր երկարամեայ սրտամօտիկ ընկերոջմէն, կը պարտաւորեցնէ բոլորս իր յիշատակը ՎԱԹ պահել, ի դէմս իր անտեղի, անժամանակ եւ ...«աններելի» մեկնումին:

Տխուր է իրականութիւնը, բայց ակելի ցաւցնող՝ ճշմարտութիւնը:



